

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

03.03.2021թ. № 6 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

 Կ. Վ. Հարությունյան



## **Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ**

### **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» (այսուհետ՝ ԲՊՀ) հիմնադրամի կարիերայի կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է նպաստել աշխատանքային շուկայում ԲՊՀ հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների մրցունակության, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, կրթության որակի բարելավման խնդիրների լուծմանը:

2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԲՊՀ հիմնադրամի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

3. Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցում է ԲՊՀ հիմնադրամի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ (այդ թվում՝ հասարակական, միջազգային, առևտրային և այլն)՝ սահմանված կարգի համաձայն:

4. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է ԲՊՀ հիմնադրամի միջոցներից, դրամաշնորհներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումներն իրականացվում են ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի որոշմամբ:

6. Կենտրոնի վերակազմակերպումը և լուծարումն իրականացվում է՝ համաձայն ԲՊՀ հիմնադրամի կանոնադրության:

7. Կենտրոնի կազմում գործում է ՍՄԱՐԹ ձեռնարկատիրական կենտրոնը («SMART Caff»), որի հիմնական նպատակն է նպաստել ԲՊՀ հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև այլ շահակիցների ձեռնարկատիրական հմտությունների ու կարողությունների զարգացմանը, աջակցել սկսնակ բիզնես գաղափարների զարգացմանը և իրագործմանը: ՍՄԱՐԹ ձեռնարկատիրական կենտրոնն օգտագործում է «SMART Caff» ապրանքանիշը՝ ներքին և արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունը և համագործակցությունը բարելավելու նպատակով:

## **II. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

8. Կենտրոնի խնդիրներն են՝

- 1) ԲՊՀ հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ ԲՊՀ-ում տարվող աշխատանքների կազմակերպում, համակարգում և ամփոփում,
- 2) մասնագիտությունների կրթական ծրագրերի արդիականության և շարունակական բարելավման ուղղությամբ համագործակցություն ԲՊՀ-ի ստորաբաժանումների հետ,
- 3) ԲՊՀ հիմնադրամի ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև արդյունավետ կապի ապահովում և ամրապնդում,
- 4) ԲՊՀ հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների կողմից բիզնես գաղափարների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում, համակարգում և ամփոփում,
- 5) ԲՊՀ հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև այլ շահակիցների ձեռնարկատիրական հմտությունների ու կարողությունների զարգացում,
- 6) Մասնագիտական հանրության հետ հաղորդակցման և համագործակցության կազմակերպում:

9. Կենտրոնի գործառույթներն են՝

- 1) սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների, գիտաժողովների, պատրաստման և վերապատրաստման դասընթացների, աշխատաշուկայում արդի պահանջների և աշխատանքի որոնման տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների կազմակերպում,

- համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն,
- 2) ուսանողների զբաղվածությանն առնչվող գրականության մշակում և հրապարակում,
  - 3) ամբիոնների և ԳՈՒԿ-երի հետ համագործակցելով՝ պրակտիկայի ձևերի, հնարավոր պայմանների և պայմանավորվածությունների ձեռքբերում,
  - 4) բուհի և գործատուի համաձայնությամբ ԲՊՀ հիմնադրամի ուսանողների պրակտիկայի կազմակերպման աջակցություն,
  - 5) զբաղվածության ծառայությունների ու գործակալությունների հետ կապերի հաստատում և զբաղվածությանն առնչվող տեղեկատվության փոխանցման ու տարածման ապահովում,
  - 6) գործատուների առաջարկած փոփոխությունների ներկայացում ֆակուլտետներին և ամբիոններին ու ԳՈՒԿ-երին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կադրերի պատրաստման փաթեթի համատեղ նախապատրաստում,
  - 7) պրակտիկայի, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռքբերման ժամանակակից այլ ձևերի և միջոցների վերաբերյալ առաջարկությունների, ծրագրերի մշակում և համապատասխան աշխատանքների իրականացում,
  - 8) տեղեկատվական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ համապատասխան տվյալների հենքերի, խմբերի և համացանցային այլ միջոցների ձևավորում և կառավարում,
  - 9) իրեն վերապահված ոլորտներին վերաբերող հարցերի շրջանակներում գործատուների, տարբեր կազմակերպությունների հետ համաձայնագրերի և հուշագրերի կնքման աշխատանքների համակարգում, դրանց իրականացման ապահովում,
  - 10) աշխատանք առաջարկող պետական, մասնավոր, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից առաջնային համարվող պահանջների և դրանց զարգացման միտումների պարբերաբար ուսումնասիրություն,
  - 11) աշխատաշուկայի զարգացման հեռանկարների, աշխատաշուկայում համալսարանների պահանջի, ժամանակակից մասնագիտությունների և զբաղվածության հետ առնչվող այլ հիմնահարցերի պարբերաբար ուսումնասիրություն,
  - 12) պետական և մասնավոր սեկտորում զբաղվածության խնդիրներով զբաղվող պետական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր հիմնադիրների, միջազգային դոնոր կառույցների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպում,
  - 13) տարբեր գործատուների հետ կապերի հաստատում և նրանց պահանջարկների առանձնահատկությունների ներկայացում բուհում,

- 14) գործատուների մասնակցությամբ տեղեկատվական տարբեր միջոցառումների կազմակերպում,
- 15) գործատուների կողմից առաջարկվող աշխատանքային հնարավորությունների, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և այլ ծրագրերի մասին տեղեկատվության տարածում,
- 16) տարբեր ցուցահանդեսների (մասնավորապես՝ «աշխատանքի տոնավաճառ», «կարիերայի օր» և այլն), գործատուների հետ հանդիպումների, կազմակերպությունների ներկայացումների (շնորհանդեսների), ձեռնարկությունների էքսկուրսիաների, փոխայցելությունների և այլ միջոցառումների կազմակերպում,
- 17) «ԲՊՀ Շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության հետ ուսանողների և շրջանավարտների ներգրավմամբ միջոցառումների կազմակերպում,
- 18) ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալների բազայի թարմացում,
- 19) «ԲՊՀ Շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության, Հայաստանի և արտերկրի այլ բուհերի նմանօրինակ ստորաբաժանումների հետ համագործակցություն և փորձի փոխանակում,
- 20) շրջանավարտների և ուսանողների հանդիպումների և կլոր սեղանների, շրջանավարտների մեծարման երեկոների, շրջանավարտների հավաքների կազմակերպում, շրջանավարտների աջակցությամբ և հանգանակած միջոցներով նպատակային ծրագրերի իրականացում,
- 21) փոխանակման ծրագրերում ուսանողների/շրջանավարտների և ՊԴ կազմի, վարչական աշխատակցիների շարժունության հարցերում աջակցության տրամադրում,
- 22) ՍՄԱՐԹ ձեռնարկատիրական կենտրոնի միջոցով խմբերին կամ անհատներին աջակցության ցուցաբերում՝ բիզնես գաղափարները գեներացնելու, բիզնես-նախագծերի զարգացման, ինչպես նաև ֆինանսական հնարավոր ռեսուրսների կամ ֆոնդերի հայթայթման գործընթացներում՝ ստեղծելով և ապահովելով առավել բարենպաստ պայմաններ,
- 23) ՍՄԱՐԹ ձեռնարկատիրական կենտրոնի միջոցով վճարովի և անվճար ծառայությունների տրամադրում՝ համակարգչային և ծրագրային լիարժեք աջակցություն, աշխատանքային տարածք, դասընթացներ, մենթորություն, համագործակցային ցանցեր՝ առկա գաղափարները զարգացնելու համար, տեղեկատվական, կրթական և այլ ծառայություններ,
- 24) ձեռնարկատիրական կրթությանն առնչվող գրականության մշակում և հրապարակում,
- 25) ԲՊՀ հիմնադրամի կանոնադրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ գործառույթների իրականացում:

### **III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

10. Կենտրոնի աշխատանքների համակարգումը վերապահվում է ԲՊՀ հիմնադրամի աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցերով պրոռեկտորին:

11. Կենտրոնի ղեկավարին նշանակում և պաշտոնից ազատում է ԲՊՀ հիմնադրամի ռեկտորը:

12. Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է ԲՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը՝ ռեկտորի ներկայացմամբ:

13. Կենտրոնի աշխատակիցներին՝ կենտրոնի մասնագետին և ՍՄԱՐԹ ծրագրերի մասնագետին, նշանակում և պաշտոնից ազատում է ԲՊՀ հիմնադրամի ռեկտորը՝ Կարիերայի կենտրոնի ղեկավարի ներկայացմամբ: